ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2020թ. թիվ 353-Ա

ԱՇՈՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի դատախազի 02.03.2020թ. թիվ 62/387-20 միջնորդագիրը և հաշվի առնելով Ա.Կյուրեղյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1391-Ն որոշմամբ հաստատված հավելված 4-ի 12-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի պաշտոն զբաղեցնողին ներկայացվող բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունենալու մասին պահանջը խախտելու, 2017թ. օգոստոսի 25-ից մինչև հոկտեմբերի 17-ը ընկած ժամանակահատվածում Հասմիկ Մազմանյանին, առանց համապատասխան կրթություն ունենալու, աշխատանքի ընդունելու և աշխատավարձ վճարելու համար «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Աշոտ Կյուրեղյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Աշոտ Կյուրեղյանին՝ հետագայում բացառել նմանատիպ խախտումները:

3. Մարզպետարանի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում պատվիրված փոստով ծանուցել հասցեատիրոջը՝ ստանալու մասին ծանուցմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. ապրիլի 13
ք.Վանաձոր